



Խ Մ Բ Ա Գ Ր Ա Կ Ա Ն

ՎԵՐԱԾՆՍԴՅԱՆ ԽՈՇՀՈՒՐԴՆ ՈՒ ՀՐԱԾՔԸ

Այս տարի նոյեմբերի 29-ին լրացավ Հայաստանում սովորական կարգերի հաստատման հիմնամյակը:

Հայ ժողովուրդը և՝ մայր նողում, և՝ սփյուռքի ողջ տարածքի վրա համագալիքն ըգևորությամբ և հապատության զգացմունքուրով է դիմավորում իր հայրենի փրկության և իր հոգևոր, մշակութային վերածրության պատմական տարեկարգը:

Վերածնված հայ ժողովուրդը իր պատմության այս մեծ հանգրկանին հապար է ։ Առափս, որ երկար դարերի ստրկությունից, թշվառությունից, անարև կյանքից նետո, ներուական ու համար պաշքարով, նվաճել է իր ազատությունը, հիմնել է իր պետութանությունը և հարստացրել է իր հոգևոր գանձերն ու դպրավոր մշակույթը՝ իրավ ու մեսարու արժեքներով։

Այս համաժողովրդական բերկրակի տոնն ատիթյան Մայր Աթոռ ու Էջմիածինը ևս, իր հայրենաւաք Հայաստանի գլխավորությամբ, իր գոհունակությունն ու ցնծությունն է բերում հայ ժողովուրդի ուրախությանն ու ոգևորությանը։

Մայր Աթոռ ու Էջմիածինի վերջին շրջանի պատմության 50 տարին անցել է Հայաստանում սովորական կարգերի հաստատման պայմաններում, հայրենի պետության խաղաղ և ապահով հովանու ներքո։

Անցնող 50 տարիներին Մայր Աթոռ ու Էջմիածինը հայրենասիրական իր

արքազան պարտքը կատարել է պատվով հայ ժողովուրդի և նրա վերածնված հայրենիքի հանդեպ։


Այս ոգով և ողջությամբ հայրենասիրական մեծ գործունեություն և ծավալել Գևորգ Ե (1920—1930), Խորեն Ա (1932—1938), Գևորգ Զ (1945—1954) և մեր արդի Տ. Վազգեն Ա կատարիլուսները՝ իրավացորդներ վկայելով, որ մեր երկիրն ու ժողովուրդը սգգային վերածնելյան փրկարար ու լուսավոր ուղի են բռնել՝ շնորհիվ Հայաստանու սովորական կարգերի հաստատման։

Մեր սգգային վերածնելյան 50-ամյակի առթիվ 1970 թվականի ապրիլի 24-ին գրած իր հայրապետական կոնդակով Հայոց Հայութեանը հաստատում էր։

«Այս պատմական տոնական տարին կողեւորե ու կմխիթարեն նաև մեր սուրբ եկեղեցին, մեր հոգևոր դասր և համայն մեր հավատացալ զավակները, վասնզի մոտ երկուհազարամյ պատմությամբ, նվիրագործված է անքակտելի միասնությունը մեր ազգին ու մեր եկեղեցին»։

Հիսուն տարիներ առաջ թշնամին փորձում էր հայ ժողովուրդի արևելյան հաստվածի վրա և արձակել «ամբողջ չարիքն աշխարհ»։ և ող-ողջ գերեզմանել հայությունը, ու շնչել մեր անոնք պատմության Էջերից։

«Կրթեր թե փակված է գիրքը հայոց պատմության և վերջն է Հայաստան երկրին։ Բայց ոչ, Աստված չեր լրած քեզ։ Նոր



ԵՐԵՎԱՆ. ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՊԱԼԱՏԸ

հովաս, նոր հավատք և նոր ուժ տվավ քեզի, և քաջ որդիներդ, իրենց սուրբ արյունով կերտեցին, բարձրացողին հաղթության նոր կուռողը Սարդարապատի, Արարատին ընծառաց, —գրում է Վեհափառ Հայրապետը Իր կոնդակում:

1920 թվականի նոյեմբերի 29: Մի բուռնայ ժողովուրդ, հյուծված ու այրունաքամ, տարագրության մուալ ճանապարհներից անցած, մահվան անհնարի եղուն հասած, աշխարհի մեծ պետությունների կողմից չառաշար խարված ու դաժանորն լրված, ոսրի էր կանգնում վիրավոր, բգկութած, բայց արի ու աննկուն շտկում էր կորացած մեջքը, սրբում ցավի ու թշվառության արցունքները և ներուսական խոյանքով, ստեղծագործ աշխատանքով ու ամոր բազուկներով հիմքը դնում իր նոր հայրենիքի:

Այս, կշնչվեր հայ ժողովուրդը նաև մեր նոյեմբերում խապատ, եթե չծագեր Սոյենիքերյան կենսատու պատագը: Պատմությունը, սակայն, այլ ճակատագիր էր վերապահել մեր ժողովրդին: Իր պատմության ամենածանր ու ճակատագրական պահին, հայ ժողովուրդը չկորցրեց իր պայծառատեսությունը և իր մեջ իմաստություն գտավ՝ տեսնելու և որդեգործու փրկության միակ ու ճշգմարիտ ճանապարհը:

Նա իր բախտը կապեց ուսու ժողովրդի հետ, երբ թվում էր, թե վերջացել է ամեն ինչ:

Նոյեմբերի 29-ը հաղթանակի և ճշմարիտ վերածննդյան օր է մեր ժողովրդի համար, նրա մղած կյանքի ու մահվան մեծ պայքարում:

Նոյեմբերի 29-ը հայ ժողովրդի ազատագրական պայքարի փառավոր ու ներուսական հանգրվանն է, ոսկի տառերով գրված մեր նոր պատմության մեջ և հայ ժողովրդի սրտում:

Նոյեմբերի 29-ը ճշմարիտ դարձակետը հանդիսացավ մեր անցյալի թես ներուսական, բայց արյունոտ տարեգրության և ընդմիշտ փակեց մեր դարավոր ողբերգության ու թշվառության դուրը: Եղենանի ու բնաջրնշմանը փոխարինեց վերածննդյան այգարացը, նոր կյանքի արշալույսը:

«Սարդարապատի հերոսամարտով և նոյեմբերյան լուսաբացով, վերջ գտավ թշվառ ու անտեր վիճակը Մայր Հայրապատնեան:

1920-ի վերջին ասու մեմին, ոռասաց եղբայր ազգության հումկու բազուկը օգնության հասավ քեզի և խապատ չքացավ վտանգը մահացու: Պայծառացավ երկինքը աշխարհին Հայոց: Մագեցավ արեգակը արդարության և խաղաղության և շինարար հառաջընթացի: Ակսար անի ու ծաղկի, հացով ու լոյսով առատ», —գրում է Հայոց

Հայրապետը Իր հորելյանական կոնդակում:

Մարառումներով, սիրանքներով, խիզախումներով ու մեծագործություններով լի հիսուն տարիներ են անցել այդ պատմական թվականից:

Հայաստանի հիսանամյակը՝ մեր վերածննդյան հիսանամյակն է: Հիսանամյակի խորհրդով ու լոյսով են ներթափանցված մեր մշակույթը, արվեստն ու գրականությունը, մեր ողջ կյանքը: Դարերի թափոր է մեր սրտերում և Երևանի պողոտաների վրա:

Հիսուն տարին պատմության մեջ մի ակրնեարթ է: «Հազար ամ յաշու Տեառն որպէս օր մի»: Բայց պատմական եղան մեր հայրենիքի և մեր ժողովրդի նվաճումները: Հիսուն տարիների մեր վաստակը հավասար է հայուրյակների ճիգին ու քրտինքին:

Անցնող հիսուն տարիների ընթացքում վիրիսարի ու մնայուն որակական փոփոխություններ են կատարվել մեր արվեստի, գիտության, գրականության, լուսավորության, առողջապահության, ժողովրդական տնտեսության, արդյունաբերության, քաղաքաշինության և ժողովրդի հոգևոր-բարոյական նոր կյանքի մեջ:

Այսօր մեր արդի Հայաստանը հակա փառուի հնամա լուսավորում է բովանդակ հայության հայշական երթուղին:

Ինչ ստեղծել է հայ ժողովուրդը հիսուն տարիների ընթացքում, դա անկողոպտելի սեփականությունն է հայ ժողովրդի, որովնետեւ մեր ժողովուրդը կրկին «Տէր և իշխան կարգեցա երկրին խրեանց և հայրենեաց»:

Արդի մեր Հայաստանն է հայ ժողովրդի պայծառ հույսերի, ազգային իդեալների փրկարար հանգրվանը, խաղաղ ու ապահով հավահանգիստը, դարերով երազված և հուսկ որեմն գտնված ավետաց երկիրը:

Այսօր Արարատի դիմաց ահեղ զորությամբ հայրենի հողի վրա հայ ժողովուրդը վառել է իր հավերժության խարույկը և իր սեփական ձեռքերի մեջ է ամփոփել իր ճակատագիրը, եղբարական ժողովուրդների համերաշխ ընտանիքում:

Այսօր մեր ժողովրդի հոգում բյուր երազ եկը են ծաղկում: Անցնող յորաքանչյուր տարի երշանկության, խաղաղության նոր գարուններ է բերում մեր երկրին և ժողովրդին: Այսօր պայծառ է մեր ներկան, է՞լ ավելի հոսանքից ու վառ՝ մեր ապագան: Այսօր հպարտորեն կանգնել է հայ ժողովուրդը իր վերածնված մայր հողի վրա, կանգնել է ինքնավատահ, անկոտրում հավատքով դեպի պայծառ ապագան:

Մայր Արտու և Էջմիածինն էլ մեր օրերի իր վերաշինությունն ու հոգևոր զարթոնքը պարտական է մայր հողի վրա ստեղծված

պիտականությանը, խաղաղությանն՝ ու ազգային ասպահովությանը:

Հավերժական փառ և օրինությունն ու Հջմիածնից, մեր վերածնված նոր կյանքին ու հողին, մեր սիրելի և «անոյշ Հայաստանին»:

Մայր Արոռ ու Հջմիածնը իր հայրենության գլխավորությամբ և համայն հավատացյալ ժողովուրդը հայոց սրբեանդ աղոթում են համազգային այս մեծ

տոնի առջիկ հայրենիքի Ե՛լ ամելի բարօրության և բարգավաճման, հայ ժողովրդի պահան ապագայի և աշխարհի խաղաղության համար:

Թող օրինվի համեստ, պահի ու պահանձի հայսախնամության հզոր Աջով և հոյ ժողովրդի բազուկներով ու համարով «Ամբուղեան կողմն աշխարհիս, Հայրապետութիւն և Հանրապետութիւն հայոց»:

